



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
« 14 » 09 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0173-21

Ձեռնարկողը՝

«Նոգառա» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Արուսյան 4 մկրշ. 71,22

Գործունեությունը՝

**Արամուսի բազալտի հանքավայրի Նոգառա երևակումում
օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2020-
2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ**
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0173-21

< 14 > 09 2021թ.

Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Նոգառա երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2020-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Նոգառա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Կոտայքի մարզ, Արամուս համայնք

Ներածական մաս. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը վարչական տեսանկյունից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի վարչական տարածքում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նշանակության վարելահողերով:

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքերևակման Նոգառա տեղամասի 5,81հա տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ներկայացվող ծրագիրը, նպատակ ունենալով պարզաբանելու օգտակար հանածոյի հաստվածքի պարամետրերը, որակական հատկանիշները որպես հումք երեսապատման և շինարարական իրերի արտադրության համար ГОСТ 9479-98 «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» և ՀՍ 100-95 «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» տեխնիկական պահանջներին բավարարող երեսապատման սալերի և շինարարական խճի արտադրության համար:

Ուսումնասիրվող տեղամասի ծայրակետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով.



- | | |
|-----------------|--------------|
| 1. Y =8471631.0 | X =4455821.0 |
| 2. Y =8471658.0 | X =4455778.0 |
| 3. Y =8471670.0 | X =4455689.0 |
| 4. Y =8471755.0 | X =4455692.0 |
| 5. Y =8471771.0 | X =4455613.0 |
| 6. Y =8471908.0 | X =4455637.0 |
| 7. Y =8471868.0 | X =4455832.0 |
| 8. Y =8471797.0 | X =4455912.0 |
| 9. Y =8471712.0 | X =4455964.0 |

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կիրականացվեն հորատանցքերով, փորձնական բացահանքով, հետախուզահորերով և նմուշարկման աշխատանքներով:

Ուսումնասիրվող տարածքում անհրաժեշտ է կատարել 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ: Երկրաբանական քարտեզ կազմելու համար նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ: Դրանից բացի բոլոր փորվածքների, նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Բազալտների հզորությունը, տարածումը, մորֆոլոգիան և պիտանելիությունը պարզելու նպատակով նախատեսվում է մաքրվածքների անցում: Նախատեսվում է անցնել ընդհանուր մինչև 50մ³ ծավալով մաքրվածքներ:

Տեղամասում բազալտների հզորությունը որոշելու, որակական հատկանիշները պարզաբանելու, օգտակար հաստվածքը եզրագծելու և արդյունաբերական կարգերով պաշարների հաշվարկելու համար նախատեսվում է կատարել մեխանիկական սյունակային հորատում:

Արդյունաբերական A կարգի համար հորատանցքերի միջև հեռավորությունը կազմելու է մինչև 200մ, իսկ B կարգի համար՝ մինչև 300մ: Նախնական տվյալներով բազալտների հզորությունը տատանվում է 10մ-ից մինչև 20մ-ի սահմաններում, հետևաբար նախատեսվում է հորատել 15-20մ խորությամբ 9 հորատանցք:

Ընդամենը նախատեսվում է հորատել 150.0զծ. մ:

Հորատումը կիրականացվ CS 14 հորատող հաստոցներով՝ 112մմ և 93մմ հորատման տրամագծերով համաձուլվածքային հորատող թագիկներով: Հորատման ընտրված ձևը պետք է ապահովի 90%-ից ոչ պակաս հորատահանուկի ելք:

Ընդամենը նախատեսվում է նախապատրաստել 9 հորատման հարթակ՝ 288մ² ընդհանուր մակերեսով և 76.8մ³ ծավալով:

Տեղամասում բազալտների օգտակար հաստվածքից I-V կարգի բլոկների ելքը որոշելու համար նախատեսվում է անցնել փորձնական բացահանք՝ 8x4x5մ չափերով: Փորձնական բացահանքից նախատեսվում է արդյունահանել 150մ³ բազալտ, այդ թվում՝ 100մ³ թարմ և 50մ³ վերին շերտի խիստ ճեղքավորված բազալտ, որը կուսումնասիրվի որպես շինարարական խճի արտադրության հումք: Փորձնական հանույթը կիրականացվի էքսկավատորով:

Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու համար նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկելու մինչև 5.0մ³ ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ:

Սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել ընդամենը՝ 43 նմուշ.

ակոսային – 5 նմուշ,

հորատահանուկի – 30 նմուշ,

մենաքարերի – 5 նմուշ,

պետրոգրաֆիական – 3 նմուշ,



Տեղամասում բազալտների քիմիական կազմը որոշելու համար տեղամասում փորվածքներից՝ մաքրվածքներից և փորձնական բացահանքից կվերցվեն ակոսային հինգ նմուշներ:

Բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով հորատումից ստացված հորատահանուկը ենթարկվելու է նմուշարկման: Նմուշարկման է ենթարկվելու բոլոր հորատանցքերից հանված թարմ, չփոփոխված բազալտների հանուկները:

Նմուշների երկարությունը կազմելու է մինչև 5մ: Նմուշարկվող հորատահանուկի ծավալը կկազմի 30 նմուշ:

Բազալտների օգտակար հաստվածքի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով ծրագրով նախատեսվում է մաքրվածքներից և փորձնական բացահանքից վերցնել հինգ մենաքարային նմուշներ յուրաքանչյուրը՝ 20x20x20սմ չափերի:

Բոլոր հանուկային և մենաքարային նմուշները ենթարկվելու են ֆիզիկամեխանիկական փորձարկումների, ուսումնասիրվելու է 35 նմուշ:

Բազալտներում քիմիական տարրերի օքսիդների պարունակությունը որոշելու նպատակով անհարժեշտ է կատարել սիլիկատային անալիզներ: Հետազոտության կենթարկվի 5 նմուշ: Բազալտների միներալոգիական կազմը, կառուցվածքը և փոփոխության աստիճանը որոշելու համար պետրոգրաֆիական ուսումնասիրության կենթարկվեն 3 թափանցիկ հղկուկներ:

Այդ ուսումնասիրությունները կկատարվեն «Անալիտիկ» ՓԲԸ-ի, ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի և ուրիշ այլ լաբորատորիաներում: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Փաստագրվելու են 50գծ.մ մաքրվածք, 150գծ.մ հորատանցք և 1 փորձնական բացահանք՝ 8գծ.մ:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել տեղամասի ապարների զանգվածների առանձնահատկությունները, դրանց անիզոտրոպիան, ապարների կազմը, դրանց ճեղքավորվածությունը, ապարների կազմվածքային յուրահատկությունները, ինչպես նաև տեղամասում առկա գեոդինամիկ երևույթները:

Հիդրոերկրաբանակն դիտարկումներով նախատեսվում է պարզաբանել տեղամասում առկա գրունտային և խորքային ջրերի առկայությունը, խորությունները, քիմիական կազմը, որակակար հատկությունները: Նախատեսվում է դիտարկումները կատարել եռամսյակը 2 անգամ:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթափիզիկական հատկությունները պարզաբանելու համար :

Հողի վերին շերտի պահպանության նպատակով ծրագրով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ, մաքրվածքների տարածքից հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է մաքրվածքների և հորատման հրապարակների մակերեսից, երբ հողաբուսաշերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Հորատման հրապարակների ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է 288.0մ², իսկ մաքրվածքների մակերեսը՝ 15.0մ², ընդամենը 303.0մ², որտեղ հողաբուսական ծածկ առկա է միայն 48% մակերեսում: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է՝ 303մ² x 48% x 0.2մ = 29մ³ :

Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Աշխատանքների կատարման համար կհատկացվի 87.0 հազ.դրամ:



Փորձնական արդյունահանման աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման աշխատանքների, հորատասեպային եղանակով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- օգտագործված տեխնիկական յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:

- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

- փոշենստեցման նպատակով աշխատանքների ընթացքում ջրցանում երևակման տարածքին մոտեցնող ճանապարհի երկայնքով և փորձնական բացահանքի սահմաններում,

- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,

- խախտված լանդշաֆտի վերականգնում,

- բուսական և կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,

- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, (նախապես համաձայնեցնելով համայնքապետարանի հետ),

- նախատեսվում է կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

- տարածքում աշխատող տեխնիկական լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում, բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում,

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Արամուսի համայնքապետարանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև Կոտայքի մարզապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն



Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Աշխատանքների ընթացքում ղեկավարվել առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի N15-Ն նորմերի պահանջներով:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Նոգառա» ՍՊԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի Նոգառա երևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով 2020-2022թ.թ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Հ. Մեսրոպյան